

Հավելված 1  
Հայաստանի Հանրապետության  
պաշտպանության նախարարի  
2022թ. հունվարի 27-ի  
N 97-Լ հրամանի

Հավելված 1  
Հայաստանի Հանրապետության  
պաշտպանության նախարարի  
2018թ. դեկտեմբերի 17-ի  
N 1552-Լ հրամանի

**ՀՀ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՄԱՆ  
ԿԱՐԳ**

**1. Պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելը**

1. Սույն կարգով (այսուհետև՝ Կարգ) կարգավորվում են ՀՀ զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելու հետ կապված հարաբերությունները:

2. Ձինծառայողներին «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելու հիմքեր են՝

1) զինծառայողի զեկուցագիրը (իր նախաձեռնության դեպքում) և գորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից ներկայացված արձակման վերաբերյալ միջնորդագիրը՝ «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 3-րդ կետերի, ինչպես նաև 5-րդ կետի հիմքերով արձակման ներկայացնելիս,

2) կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննական կենտրոնի որոշումը՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու մասին,

3) կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողի զեկուցագիրը՝ առաջարկված պաշտոնին (պաշտոններին) նշանակվելու համաձայն չլինելու վերաբերյալ (միայն նախկին զբաղեցրած հաստիքից ցածր առաջարկների դեպքում) կամ զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու իրավասություն ունեցող

պետի ենթակա կադրային մարմնի կողմից տրված եզրակացությունը (ձև 22)՝ զինժառանգողի զինվորական հաշվառման մասնագիտությանը, ծառայողական գործունեության փորձին, առողջական վիճակին համապատասխան առկա թափուր այլ զինվորական պաշտոն չլինելու վերաբերյալ,

4) օրենքով սահմանված կարգով կիրառված «զինվորական ծառայությունից արձակում» կարգապահական տույժի վերաբերյալ համապատասխան պաշտոնատար անձի հրամանը,

5) մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու վերաբերյալ զինժառանգողի զեկուցագիրը, այդ թվում՝ օրենքով սահմանված հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության պարտավորությունից բխող ուսման ծախսերի փոխհատուցման կամ տուժանքի վճարման պատրաստակամությամբ,

6) զինվորական ծառայությունից արձակելու վերաբերյալ զեկուցագիրը՝ ռազմաուսումնական հաստատությունից, կամ սպայական, կամ սերժանտական դասընթացներից, կամ ակադեմիական ուսումնառությունից, կամ պաշտպանության նախարարության պատվերով միջին մասնագիտական, կամ բարձրագույն, կամ հետբուհական ուսումնական հաստատությունից իր դիմումի համաձայն ազատվելիս, ինչպես նաև սպայական կամ սերժանտական դասընթացներից, կամ ակադեմիական ուսումնառությունից, կամ պաշտպանության նախարարության պատվերով միջին մասնագիտական, կամ բարձրագույն, կամ հետբուհական ուսումնական հաստատությունից անբավարար առաջադիմության կամ անկարգապահության հիմքով հեռացվելիս,

7) անբավարար առաջադիմության կամ անկարգապահության հիմքով ռազմաուսումնական հաստատությունից հեռացնելու վերաբերյալ հրամանը,

8) ազատագրկման հետ կապված պատժի դատապարտվելու կամ զինվորական կոչումից զրկելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռը,

9) զոհվելու (մահանալու) վերաբերյալ վկայականը,

10) անհայտ բացակայող կամ Ֆահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը:

3. Համապատասխան հիմքերի առկայության դեպքում զինժառանգողներին «Զինվորական ծառայության և զինժառանգողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան զինվորական ծառայությունից արձակելու գործընթացը կազմակերպվում է հետևյալ կարգով՝

1) պլանավորված արձակուրդների դեպքերում՝ արձակման ժամկետից առնվազն երկու ամիս առաջ.

ա. առողջական վիճակից գանգատներ ունենալու դեպքում զինծառայողն ուղեգրվում է բժշկական հաստատություն՝ հետազոտվելու և անհրաժեշտության դեպքում ռազմաբժշկական փորձաքննության ենթարկվելու,

բ. զինծառայողի՝ ծառայության վայրում պահպանվող անձնական գործում համապատասխան նախնական ճշտումներ և լրացումներ կատարելուց հետո՝ տեղեկատվության լիարժեքությունն ու անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունն ապահովելու նպատակով ՊՆ կենտրոնական արխիվից (անհրաժեշտության դեպքում՝ նաև նախկին ծառայության վայրերից ու ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչության միջոցով ՀՀ պետական լիազոր այլ մարմիններից) գրությամբ պահանջվում և անձնական գործին են կցվում նախկինում անցած պայմանագրային զինծառայությունը (այդ թվում՝ արտոնյալ հաշվարկով) հիմնավորող անձնակազմի վերաբերյալ հրամանների քաղվածքները և անհրաժեշտ այլ փաստաթղթեր,

2) Կարգի 2-րդ կետի՝

ա. 1-ին և 5-րդ ենթակետերով (հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության պարտավորություն չունեցող) նախատեսված դեպքերում հնգօրյա ժամկետում զորամասի համալրման (կադրերի) բաժանմունքում սահմանված կարգով նախապատրաստվում են զինվորական ծառայությունից արձակման համապատասխան փաստաթղթեր: Ընդ որում,

- նույն զորամասի հրամանատարի իրավասության սահմաններում հրամանագրման ենթակա պաշտոն զբաղեցնող զինծառայողին արձակելիս նախապատրաստվում է միայն զինծառայողի անմիջական պետի միջոցով ըստ վերադասության զորամասի հրամանատարին ուղղված զեկուցագիրը,

- այլ պետի իրավասության սահմաններում հրամանագրման ենթակա պաշտոն զբաղեցնող զինծառայողին արձակելիս նախապատրաստվում է զինծառայողի զեկուցագիրը և միջնորդագիրը (ձև 1): Չինծառայողը ծանոթացվում է միջնորդագրի բովանդակությանը,

բ. 2-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում զորամասում (զինվորական կառավարման մարմնում) կատարվում են սույն Կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում նշված աշխատանքները,

գ. 3-րդ ենթակետով նախատեսված դեպքերում կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու իրավասություն

ունեցող պետի ենթակա կադրային մարմնում կատարվում են սույն Կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում նշված աշխատանքները, այնուհետև յոթնօրյա ժամկետում պետի անունով նախապատրաստվում է հիմնավորված գեկուցագիր՝ զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու վերաբերյալ առաջարկությամբ, դ. 5-րդ ենթակետով նախատեսված դեպքերում հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության պարտավորություն ունեցող զինծառայողի գեկուցագրին ընթացք է տրվում հետևյալ կարգով՝

- ուսման ծախսերի փոխհատուցման պարտավորություն ունեցող զինծառայողը գեկուցագիր է ներկայացնում իր ծառայության վայրի գորամասի հրամանատարին (պետին), որում նշվում են զինվորական ծառայությունից հրաժարվելու պատճառը և ուսման ծախսերը փոխհատուցելու պատրաստակամությունը: Կադրերի տրամադրության տակ գտնվող զինծառայողը գեկուցագիր է ներկայացնում ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչության պետին: Հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու գեկուցագիր ստացած հրամանատարը (պետը) պարտավոր է ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում հաշվառված գեկուցագիրը և զինծառայողի անձնական գործը՝ կից գրությամբ, ուղարկել ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչություն (պատճենը՝ անմիջական հրամանատարին), որտեղ փաստաթղթերը մուտքագրվելուց հետո ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը համաձայնեցվում է ՊՆ ֆինանսաբյուջետային վարչության հետ և ներկայացվում զինծառայողին: Ընդ որում, ՊՆ ֆինանսաբյուջետային վարչությունը ուսման ծախսերի փոխհատուցման գումարի չափը հաշվարկում է հարցումն ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ արդյունքներն անմիջապես ներկայացնելով ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչություն: Գումարի չափի հետ միասին ներկայացվում են նաև հիմնավորող հաշվարկները: Ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափի վերաբերյալ զինծառայողի կողմից առարկություն չլինելու դեպքում փոխհատուցման ենթակա գումարը 5-օրյա ժամկետում զինծառայողը փոխանցում է ՊՆ հատուկ հաշվեհամարին և վճարումը հաստատող փաստաթղթի բնօրինակը՝ վճարման օրվանից ոչ ուշ, քան 2-օրյա ժամկետում ներկայացնում է ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչություն: Ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափի հետ համաձայն չլինելու դեպքում զինծառայողը ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչության պետի

անունով ներկայացնում է զեկուցագիր, որում նշվում է գումարի չափի վերաբերյալ առարկության հիմնավորումը (ըստ էության ներկայացնելով ՀՀ ՁՈՒ պահեստագորարձակման նոր զեկուցագիր, և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված 1-ամսյա ժամկետը հաշվարկվում է զինծառայողի փոխհատուցման գումարին համաձայն չլինելու վերաբերյալ ներկայացրած զեկուցագրի հաշվառման օրվանից): Եթե առարկությունը հիմնավոր է, ապա գումարի չափը փոխվում է՝ կատարելով փաստացի ծախսերի ճշգրիտ հաշվարկ: ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչությունը գումարի վճարման վերաբերյալ փաստաթուղթը կցելով զինծառայողի ծառայությունից արձակման հրամանի նախագծին, դրանք ներկայացնում է զինծառայողին ծառայությունից արձակելու իրավասություն ունեցող հրամանատարին (պետին),

- տուժանքի վճարման պարտավորություն ունեցող զինծառայողը զեկուցագիր է ներկայացնում իր ծառայության վայրի զորամասի հրամանատարին (պետին), իսկ կադրերի տրամադրության տակ գտնվող զինծառայողը՝ ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչության պետին, որում նշվում է զինվորական ծառայությունից արձակվելու հիմքը: Զինծառայողի զեկուցագիրն ստացած հրամանատարը պարտավոր է ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում հաշվառված զեկուցագիրը և անձնական գործը՝ կից գրությամբ, ուղարկել ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչություն (պատճենը՝ անմիջական հրամանատարին): ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչությունը զորամասից ստացված փաստաթղթերը կամ կադրերի տրամադրության տակ գտնվող զինծառայողի զեկուցագիրը մուտքագրվելու կամ զինվորական ծառայությունից արձակումն առանց զինծառայողի համաձայնության իրականացնելու դեպքում՝ օրենքով սահմանված հիմքի ծագման օրվանից հետո ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում, օրենքով սահմանված տուժանքի ընդհանուր գումարի չափի ու գումարը վճարելու բանկային հաշվի համարի վերաբերյալ տեղեկատվությունը գրավոր տրամադրում է զինծառայողին: Օրենքով սահմանված տուժանքի ընդհանուր գումարի չափի վերաբերյալ զինծառայողի կողմից առարկություն չլինելու դեպքում զինծառայողը գումարը 5-օրյա ժամկետում փոխանցում է համապատասխան բանկային հաշվի համարին, և վճարումը հաստատող փաստաթղթի բնօրինակը՝ վճարման օրվանից ոչ ուշ, քան 2-օրյա ժամկետում ներկայացնում է ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչություն, որը դրանք կցելով զինծառայողին զինվորական

ծառայությունից արձակելու մասին հրամանի նախագծին, ներկայացնում է զինծառայողին ծառայությունից արձակելու իրավասություն ունեցող հրամանատարին (պետին)՝ «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ու ժամկետում զինծառայողի արձակումն իրականացնելու համար: Օրենքով սահմանված տուժանքի ընդհանուր գումարի չափի հետ համաձայն չլինելու դեպքում զինծառայողը ՊՆ կադրային և ռազմակրթական քաղաքականության գլխավոր վարչության պետի անունով ներկայացնում է զեկուցագիր (ըստ էության ներկայացնելով ՀՀ ՁՌԻ պահեստագոր արձակման նոր զեկուցագիր և «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված 1-ամսյա ժամկետը հաշվարկվում է զինծառայողի տուժանքի գումարին համաձայն չլինելու վերաբերյալ ներկայացրած զեկուցագրի հաշվառման օրվանից), որում նշվում է գումարի չափի վերաբերյալ առարկության հիմնավորումը: Եթե առարկությունը հիմնավոր է, ապա գումարի չափը փոխվում է, որի վերաբերյալ զինծառայողին տեղեկացումը և զինծառայողի կողմից գումարի վճարումն իրականացվում է սույն պարբերությամբ սահմանված ընթացակարգի համաձայն:

Նույն գորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից հրամանագրման իրավասության դեպքում տուժանքի հաշվարկը և սույն պարբերության գործառույթներն <sup>7</sup> իրականացվում են ենթակա կադրային ստորաբաժանման կողմից:

Օրենքով սահմանված հիմքով զինվորական ծառայությունից արձակման ենթակա զինծառայողի կողմից օրենքով սահմանված ուսման ծախսերի փոխհատուցումը կամ տուժանքը սույն պարբերությամբ սահմանված ժամկետներում չվճարելու կամ վճարելուց հրաժարվելու դեպքերում, ինչպես նաև եթե զինծառայողը ցանկություն չի հայտնել շարունակելու զինվորական ծառայությունը, ՊՆ համապատասխան կադրային մարմինը սույն Կարգով սահմանված կարգով և ժամկետում զինծառայողին արձակում է զինվորական ծառայությունից և արձակման մասին հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում զինծառայողի և վճարման ենթակա գումարի վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է ՊՆ իրավաբանական վարչություն՝ օրենքով սահմանված ուսման ծախսերը կամ տուժանքը դատական կարգով բռնագանձելու համար,

ե. 4-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում զինվորական ծառայությունից արձակելու իրավասություն ունեցող պետի կադրային մարմնում կա-

տարվում են սույն կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունում նշված աշխատանքները,

3) նույն գործառնասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից հրամանագրման իրավասությունից դուրս զինվորական ծառայությունից արձակելու նյութերն անձնական գործի 1-ին օրինակի հետ ըստ վերադասության ուղարկվում են այդ իրավասությունն ունեցող պետի հրամանագրմանը,

4) սույն կետի 2-րդ ենթակետում նշված փաստաթղթերի հիման վրա զինվորական ծառայությունից արձակելու իրավասություն ունեցող պետի ենթակա կադրային մարմնում 15 – օրյա ժամկետում ուսումնասիրվում են ներկայացված փաստաթղթերը, ստուգվում օրենքի պահանջներին համապատասխանությունը, այնուհետև նախապատ-րաստվում արձակելու վերաբերյալ հրամանի նախագիծ (ձև 2-ից 21) և հիմքերի հետ ներկայացվում պետի ստորագրմանը,

5) միջնորդագրում և արձակման հրամանում օրացուցային ընդհանուր ստաժից օրենքով սահմանված ծառայության տեսակներով և ժամանակահատվածներով տարանջատումը կատարվում է միայն օրենքով սահմանված դրամական օգնություն ստանալու իրավունք վերապահող հիմքերով արձակման ժամանակ,

6) օրենքով սահմանված պահանջների խախտում կամ թերություն (որոնք հնարավոր չէ տեղում վերացնել) հայտնաբերվելու դեպքում զինվորական ծառայությունից արձակելու առաջարկին ընթացք չի տրվում և այդ մասին գրավոր հայտնվում է ներկայացումն ուղարկող գործառնասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարին (պետին),

7) զինվորական ծառայությունից արձակելու առաջարկ ներկայացնելուց հետո զինծառայողի ազգանվան, անվան, հայրանվան, պաշտոնի, հաստիքի փոփոխման դեպքերում առաջարկ ներկայացնող հրամանատարը (պետը) այդ մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է արձակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի ենթակա կադրային ստորաբաժանմանը՝ համապատասխան փոփոխություններ կատարելու համար,

8) զինվորական ծառայությունից արձակելու առաջարկ ներկայացնելուց հետո զինծառայությունից արձակելու կամ զբաղեցրած պաշտոնից ազատելու այլ հիմքեր առաջանալու դեպքում առաջարկ ներկայացնող հրամանատարը (պետը) այդ մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է ըստ վերադասության, ինչպես նաև արձակման իրավասություն ունեցող պաշտոնատար անձի ենթակա կադրային ստորաբաժանմանը և այդ հիմքերով գործընթացը կասեցվում է,

9) անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով (հերթական արձակուրդից չօգտված օրերի, արտոնյալ պայմաններով ծառայությունը հաստատող տեղեկանքների, հրամանների բացակայություն) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում զինծառայողին պահեստագոր արձակելու անհնարինության դեպքում արձակման հրամանը տրվում է առկա տվյալներով, իսկ հետագայում՝ լրացուցիչ տվյալներ ստանալու դեպքում՝ հրամանում փոփոխությունները կատարվում են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն,

10) ստորագրված հրամանները համարակալվում են ստորագրման օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Հրամանն առաքվում է շահագրգիռ բոլոր ստորաբաժանումներ, այդ թվում՝ զինծառայողի զբաղեցրած պաշտոնի Ռ-ՀՄ-ին համապատասխան գլխավոր վարչության, կամ վարչության, կամ ծառայության պետին (բացակայության դեպքում՝ իրավասու պաշտոնատար անձին),

11) գորամասի (զինվորական կառավարման մարմնի) անձնակազմի ցուցակներից հանելու հրամանի արձակումից հետո ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության՝ բնակության վայրի տարածքային ստորաբաժանում ներկայանալու և զինվորական հաշվառման կանգնելու համար զինծառայությունից արձակված զինծառայողին կարգադրագրի հետ տրվում է նաև ծառայողական բնութագիր, որում հակիրճ նշվում են զինծառայողի կատարողական կարգապահության, վերադասի և ենթակաների հետ փոխհարաբերությունների, բնավորության հիմնական գծերի, մասնագիտական, հրամանատարական կամ ղեկավարման այլ ունակությունների, բարոյահոգեբանական վիճակի, անձր բնութագրող այլ հատկանիշների, պետական մտածելակերպի մասին՝ այդ թվում ներառելով ՀՀ պաշտպանության նախարարի 2011թ. հունիսի 3-ի N652 հրամանով գործողության դրված «ՀՀ զինված ուժերում սպայի բնորոշման և գնահատման թերթիկի» 1-ին, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 15-րդ և 18-րդ հարցերի պատասխանները:

## **2. Պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելու իրավասությունները**

4. ՀՀ զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայությունից արձակում են՝

1) ՀՀ պաշտպանության նախարարը՝



ա. ՀՀ ՊՆ բարձրագույն սպայական կազմի պաշտոններ զբաղեցնող անձանց՝ բացառությամբ ՀՀ նախագահի իրավասությանը վերապահված անձանց,

բ. «գնդապետ» հաստիքային դասակարգումով, ինչպես նաև առանձին զորամասի կարգավիճակ ունեցող կառուցվածքային ստորաբաժանումների «փոխգնդապետ» հաստիքային դասակարգումով հրամանատարների պաշտոններ զբաղեցնող անձանց,

գ. ՀՀ պաշտպանության նախարարի անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների զինվորական պաշտոններ զբաղեցնող անձանց,

դ. ՀՀ ՁՈՒ սպայական կազմի պաշտոններ զբաղեցնող զինծառայողներին՝ «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ (հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու պարտավորություն <sup>10</sup> ունեցող) կամ 9-րդ կամ 10-րդ կետերի հիմքերով,

ե. պարտադիր զինվորական ծառայության զորակոչված սպայական կազմի զինծառայողներին,

զ. կադրերի տրամադրության տակ թողնված անձանց,

է. անհրաժեշտության դեպքում՝ սույն կետում նշված բոլոր զինծառայողներին,

2) ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝

ա. «գնդապետ» դասակարգումով 32-րդ և 33-րդ խմբերի ոչ հրամանատարական կազմի պաշտոններ զբաղեցնող անձանց,

բ. մինչև «փոխգնդապետը» ներառյալ հաստիքային դասակարգումով, այդ թվում՝ գնդի (բրիգադի) և հավասարագոր կառուցվածքային ստորաբաժանումների հրամանատարների տեղակալների, նրանց հավասարեցված, ինչպես նաև այլ սպայական, ենթասպայական և շարքային պայմանագրային պաշտոններ զբաղեցնող անձանց,

գ. առանձին զորամասի կարգավիճակ ունեցող կառուցվածքային ստորաբաժանումների՝ մինչև «մայորը» ներառյալ հաստիքային դասակարգումով հրամանատարների պաշտոններ զբաղեցնող անձանց,

դ. սույն ենթակետի «ա» և «բ» պարբերություններում նշված պաշտոններից կադրերի տրամադրության տակ թողնված անձանց,

ե. անհրաժեշտության դեպքում՝ սույն կետում նշված բոլոր զինծառայողներին՝ բացառությամբ ՀՀ պաշտպանության նախարարի իրավասությանը վերապահված անձանց,

3) գլխավոր վարչության պետ - գլխավոր շտաբի պետի տեղակալները, պաշտպանության բանակի հրամանատարը՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝ մինչև «փոխգնդապետը» ներառյալ հաստիքային դասակարգումով պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաև այդ պաշտոններից պաշտպանության բանակի հրամանատարի հրամանով (միայն պաշտպանության<sup>11</sup> բանակի հրամանատարը) կադրերի տրամադրության տակ թողնված անձանց,

4) բարձրագույն սպայական կազմի հաստիքային դասակարգումով՝ գլխավոր վարչությունների, վարչությունների, ռազմական ոստիկանության, ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության պետերը, բանակային կորպուսների, տարածքային պաշտպանության և պահեստային ուժերի հրամանատարները՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝ մինչև «մայորը» ներառյալ հաստիքային դասակարգումով պաշտոններ զբաղեցնող անձանց,

5) բարձրագույն սպայական կազմի հաստիքային դասակարգումով՝ ռազմաստումնական հաստատությունների պետերը, խաղաղապահ ուժերի բրիգադի հրամանատարը, «գնդապետ» դասակարգումով վարչությունների պետերը՝ անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝ մինչև «կապիտանը» ներառյալ հաստիքային դասակարգումով պաշտոնների,

6) առանձին զորամասի կարգավիճակ ունեցող կառուցվածքային ստորաբաժանումների առնվազն «փոխգնդապետ» հաստիքային դասակարգումով հրամանատարները՝

անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների և սույն կետով այլ պաշտոնատար անձանց իրավունք չվերապահված՝ ենթասպայական և շարքային կազմերի հաստիքային դասակարգումով պաշտոններ զբաղեցնող անձանց:»:

« Հրամանագրված է »  
հրաման N \_\_\_\_\_ ա/վ  
« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_\_ թ.  
( Կ. տ. )

**Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ր**

**ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է ԱՐՁԱԿՄԱՆ**

\_\_\_\_\_

(առաջարկի հիմքը՝ օրենքի համապատասխան հոդվածով)

**ՁԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Ձինվորական կոչումը \_\_\_\_\_  
(ուն հրամանով, հրամանի N-ը, ամսաթիվը)

Ա.Ա.Հ. \_\_\_\_\_

Ձբաղեցրած պաշտոնը \_\_\_\_\_  
(երբվանից)

\_\_\_\_\_ Պաշտոնի կողմ \_\_\_\_\_

Ծննդյան փիվը \_\_\_\_\_ ՁԶՀԾՏ \_\_\_\_\_

Ձինվորական ծառայության ընդհանուր ստաժը զինված ուժերում \_\_\_\_\_ դրությամբ կազմում է.

ա) օրացուցային՝ \_\_\_\_\_ տարի \_\_\_\_\_ ամիս \_\_\_\_\_ օր, այդ թվում՝

- պարտադիր զինվորական ծառայությունը՝ \_\_\_\_\_ տարի \_\_\_\_\_ ամիս \_\_\_\_\_ օր,

- դրամական օգնության հաշվարկման իրավունք տվող ծառայության լրիվ ստա-  
ժը՝ \_\_\_\_\_ տարի \_\_\_\_\_ ամիս \_\_\_\_\_ օր,

- ծառայության վերջին ընդունումից՝ \_\_\_\_\_ տարի \_\_\_\_\_ ամիս \_\_\_\_\_ օր,

բ) արտոնյալ պայմաններով հաշվարկված՝ \_\_\_\_\_ տարի \_\_\_\_\_ ամիս \_\_\_\_\_ օր:

\_\_\_\_\_ դրությամբ չօգտագործված արձակուրդը կազմում է \_\_\_\_\_ օր:

Մասնակցությունը մարտական գործողություններին \_\_\_\_\_  
(վկայականի համարը և տրման ամսաթիվը)

Պայմանագրի ժամկետի ավարտը \_\_\_\_\_

Վերջին տարվա դիսպանսեր ստուգման արդյունքով առողջական վիճակը \_\_\_\_\_

## 2. ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

զորամասի հրամանատար

( զինվորական կոչումը, ստորագրությունը, ազգանունը)

Կ.տ. « » 20 թ.

## 3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՏԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ

(պաշտոնը, զինվորական կոչումը, ստորագրությունը, ազգանունը)

« » 20 թ.

(պաշտոնը, զինվորական կոչումը, ստորագրությունը, ազգանունը)

« » 20 թ.

Միջնորդագրին ծանոթացա՝

( զինծառայողն անձամբ նշում է նաև գրանցման և բնակության հասցեները, հեռախոսահամարը)

( զինվորական կոչումը, ստորագրությունը, ազգանունը)

« » 20 թ.

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի    Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն    Ն Ա Խ Ա Ր Ա Ր  
Հ Ր Ա Մ Ա Ն  
N        -Ա

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20    թ.

ք. Երևան

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ր Ա Յ Ի Ն    Ջ Ի Ն Վ Ո Ր Ա Կ Ա Ն    Ծ Ա Ռ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց  
Հ Հ    Ջ Ո Ւ    Պ Ա Հ Ե Մ Տ Ա Ջ Ո Ր    Ա Ր Ձ Ա Կ Ե Լ Ո Ւ    Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելիս)

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ    Ե Մ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 գորամասի հրամանատար (36), գնդապետ Դավիթ Կորյունի Հովսեփյանին **արձակել** ՀՀ զինված ուժերի պահեստագործ ուղարկելով հաշվառման ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանում՝ վերապահելով զինվորական համազգեստ կրելու իրավունք:

Ջինվորական ծառայության ընդհանուր ստաժը զինված ուժերում 09.07.2018թ. դրությամբ կազմում է.

- ա) օրացուցային՝ 27 տարի 00 ամիս 20 օր, այդ թվում՝
  - պարտադիր զինվորական ծառայությունը՝ 02 տարի 00 ամիս 00 օր,
  - դրամական օգնության հաշվարկման իրավունք տվող ծառայության լրիվ ստաժը՝ 25 տարի 00 ամիս 00 օր,
  - ծառայության վերջին ընդունումից՝ 16 տարի 00 ամիս 00 օր,
- բ) արտոնյալ պայմաններով հաշվարկված՝ 29 տարի 10 ամիս 12 օր:

30.08.2018թ. դրությամբ չօգտագործված արձակուրդը կազմում է 15 օր:

Նախկինում 09 տարի 00 ամիս 00 օր դրամական օգնության հաշվարկման իրավունք տվող ծառայության լրիվ ստաժի համար (20) խմբի պաշտոնի հաշվարկված դրամական օգնության ընդհանուր չափը՝ 246312 (երկու հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր տասերկու) դրամ:

ՀՀ Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն    Ն Ա Խ Ա Ր Ա Ր

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր  
Հ Բ Ա Մ Ա Ն

N -Ա

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

ք. Երևան

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿԵԼՈՒ  
ԵՎ ՊԱՇՏՈՆԱԹՈՂ ԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելիս)՝

Հ Բ Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 գորամասի ֆակուլտետի պետ (35), գնդապետ Արամայիս Վաչագանի Համբարյանին **արձակել** ՀՀ զինված ուժերից և պաշտոնաթող անել՝ անձնական գործերն ուղարկելով հաշվառման ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանում՝ վերապահելով զինվորական համազգեստ կրելու իրավունք:

Ձինվորական ծառայության ընդհանուր ստաժը զինված ուժերում 30.09.2018թ. դրությամբ կազմում է.

- ա) օրացուցային՝ 41 տարի 03 ամիս 15 օր, այդ թվում՝
  - պարտադիր զինվորական ծառայությունը՝ 03 տարի 00 ամիս 03 օր,
  - դրամական օգնության հաշվարկման իրավունք տվող ծառայության լրիվ ստաժը՝ 35 տարի 07 ամիս 29 օր,
  - ծառայության վերջին ընդունումից՝ 26 տարի 07 ամիս 22 օր,
- բ) արտոնյալ պայմաններով հաշվարկված՝ 43 տարի 10 ամիս 00 օր:  
30.09.2018թ. դրությամբ չօգտագործված արձակուրդը կազմում է 10 օր:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր  
Հ Բ Ա Մ Ա Ն

N -Ա

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

ք. Երևան

ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ  
ՀՀ ՋՈՒ ՊԱՀԵՍՏԱԶՈՐ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի (զինվորական ծառայության մեջ գտնվելու սահմանային տարիքը լրանալիս)՝

Հ Բ Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 գորամասի հրամանատարի տեղակալ (30), փոխգնդապետ Դավիթ Կորյունի Հովսեփյանին **արձակել** ՀՀ զինված ուժերի պահեստագործ ուղարկելով հաշվառման ՊՆ գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանում և վերապահելով զինվորական համազգեստ կրելու իրավունք:

Ձինվորական ծառայության ընդհանուր ստաժը զինված ուժերում 30.12.2018թ. դրությամբ կազմում է.

ա) օրացուցային՝ 18 տարի 07 ամիս 29 օր, այդ թվում՝

- պարտադիր զինվորական ծառայությունը՝ 02 տարի 00 ամիս 00 օր,

- դրամական օգնության հաշվարկման իրավունք տվող ծառայության լրիվ ստաժը՝ 16 տարի 07 ամիս 29 օր,

- ծառայության վերջին ընդունումից՝ 16 տարի 07 ամիս 29 օր,

բ) արտոնյալ պայմաններով հաշվարկված՝ 23 տարի 11 ամիս 25 օր:

30.12.2018թ. դրությամբ չօգտագործված արձակուրդը կազմում է 18 օր:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ջ Ի Ն Վ Ա Ծ ՈՒ Ժ Ե Ր Ի Գ Լ Խ Ա Վ ՈՐ Շ Տ Ա Բ Ի Պ Ե Տ  
Հ Ր Ա Մ Ա Ն

N -Ա

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.

ք. Երևան

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ր Ա Յ Ի Ն Ջ Ի Ն Վ Ո Ր Ա Կ Ա Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց  
Հ Հ Ջ ՈՒ Պ Ա Հ Ե Ս Տ Ա Ջ ՈՐ Ա Ր Ձ Ա Կ Ե Լ ՈՒ Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (պայմանագրի ժամկետը լրանալիս)՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 զորամասի գումարտակի հրամանատարի տեղակալ (23), մայոր Արմեն Դերենիկի Հովհաննիսյանին **արձակել** ՀՀ զինված ուժերի պահեստագործ՝ ուղարկելով հաշվառման ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանում:

Ջինվորական ծառայության ընդհանուր ստաժը զինված ուժերում 30.06.2018թ. դրությամբ կազմում է.

- ա) օրացուցային՝ 13 տարի 00 ամիս 29 օր, այդ թվում՝
  - պարտադիր զինվորական ծառայությունը՝ 02 տարի 00 ամիս 00 օր,
  - դրամական օգնության հաշվարկման իրավունք տվող ծառայության լրիվ ստաժը՝ 11 տարի 00 ամիս 29 օր,
  - ծառայության վերջին ընդունումից՝ 05 տարի 00 ամիս 29 օր,
- բ) արտոնյալ պայմաններով հաշվարկված՝ 15 տարի 01 ամիս 25 օր:  
30.06.2018թ. դրությամբ չօգտագործված արձակուրդը կազմում է 15 օր:

Հ Հ Ջ ՈՒ Գ Լ Խ Ա Վ Ո Ր Շ Տ Ա Բ Ի Պ Ե Տ

\* Հրամանի ձևը վերաբերում է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերած զինծառայողներին:



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի    Հ Ա Ն Բ Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն  
Ջ Ի Ն Վ Ա Ծ   ՈՒ Ժ Ե Բ Ի   Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Ծ Տ Ա Բ Ի   Պ Ե Տ

Հ Բ Ա Մ Ա Ն

N        -Ա

« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20    թ.

ք. Երևան

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ր Ա Յ Ի Ն    Ջ Ի Ն Վ Ո Ր Ա Կ Ա Ն    Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց  
Հ Հ    Ջ ՈՒ    Պ Ա Հ Ե Մ Տ Ա Ջ Ո Ր    Ա Ր Ջ Ա Կ Ե Լ ՈՒ    Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (պայմանագրի ժամկետը լրանալիս)՝

Հ Բ Ա Մ Ա Յ ՈՒ Մ    Ե Մ

ՀՀ պաշտպանության նախարարության 00000 գորամասի վաշտի հրամանատար (19), կապիտան Դավիթ Արմենի Հովհաննիսյանին **արձակել** ՀՀ զինված ուժերի պահեստագործ ուղարկելով հաշվառման ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանում :

Ձինվորական ծառայության ընդհանուր օրացուցային ստաժը զինված ուժերում 30.06.2018թ. դրությամբ կազմում է 07 տարի 00 ամիս 29 օր, այդ թվում՝

- պարտադիր զինվորական ծառայությունը՝ 02 տարի 00 ամիս 00 օր,

- դրամական օգնության հաշվարկման իրավունք տվող ծառայության լրիվ ստաժը՝ 05 տարի 00 ամիս 29 օր,

- ծառայության վերջին ընդունումից՝ 05 տարի 00 ամիս 29 օր:

30.06.2018թ. դրությամբ չօգտագործված արձակուրդը կազմում է 00 օր:

Հ Հ    Ջ ՈՒ    Գ Լ Խ Ա Վ Ո Ր    Ծ Տ Ա Բ Ի    Պ Ե Տ

\* Հրամանի ձևը վերաբերում է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք չբերած զինծառայողներին:

